ՆՈՐ-ԴԱՐ

№ 56 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 31 Մարտի **1901** Շաբաթ, 31 Մարտի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 56

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., համարը 5 կ.։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ Даръ“ կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

«ՌՈՍՍԻԱ» ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ» հաստատ հիմունքով և ձեռնտու պայմաններով ապահովացնում է՝

ՄԱՀՈՒԱՆ ԴԷՊՔՈՒՄ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ,
ԾԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ,
ԱՅՐԻՆԵՐԻ ՊԷՆՍԻԱ,
ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱԺԻՆՔ,
ԹՈՇԱԿԱՒՈՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ,
ՑԿԵԱՆՍ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ։

Առ 1 յունուարի 1901 ապահովագրուել են 75,863 հոգի

160,840,000 րուբլով։

Մանրամասնութիւնները վարչութեան մէջ (С.-Петербургъ, Большая Морская, № 37), Ընկերութեան բաժանմունքում Թիֆլիս (Սերգիեւսկայա, տ. № 6,) և կայսրութեան բոլոր քաղաքների գործակալների մօտ։

(588) 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Յարութեան տօնը։
Ապրիլի 1-ը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Բագուից։ Ղամարլուից։
Նամակ խմբագրութեան։
Գրաֆուհի Սոֆիա Տոլստայայի նամակը և միտրոպոլիտ Անտոնիի պատասխանը։
Արևմտեան նամակներ։
Քաղաքական.—Գերմանիա։ Թիւրքիա։
Հեռագրական լուրեր։
«Նոր-Դար»-ի պատասխաններ
Բանասիրական.—Ճանաչի՛ր քեզ...։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 30 մարտի 1901 թ.

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Կիրակի օրը աշխարհն, իւր քրիստոնէական պարտաւորութիւնը կատարելով, պիտի տօնէ Զատիկը. Քրիստոս յարեաւ ի մեռելոց... Այս քանիերորդ և հազարերորդ տարի է, որ քրիստոնեայ հայութիւնը տօնում է Փրկչի յարութեան տօնը և կրկնում է այդ խորհրդաւոր խօսքերը։

Որքա՜ն դարեր են անցել այն ժամանակից, երբ համեստ մի մսուրի մէջ ծնուեց Փրկիչը։ Քրիստոնեայ աշխարհին յայտնի է այդ, և մենք Յարութեան տօնի առթիւ խօսելով պիտի կրկնենք մեր ասած խօսքերը։

Փրկիչը մսուրի մէջ ծնուեց, մեծացաւ, սիրեց մարդկութիւնը, քարոզեց, հալածուեց, և «ձայն բազմաց»-ը խաչեց Նրան. այնուհետև Որդին իւր հոգին աւանդեց իւր Հօրը և բարձրացաւ երկինք, մարդկային տեսութիւնից անյայտացաւ։

Փրկչին պաշտեցին մարդիկ, երբ նա հեռացաւ մարդկանցից։

Այսօր էլ քրիստոնեայ մարդկութիւնը տօնում է Քրիստոսի ծնունդը... Քրիստոսի յարութիւնը։

Կրօնական ծէսերն արտաքուստ կատարւում են ճշտութեամբ. մարդիկ տօներին եկեղեցի են գնում, ժամ են վառում, աղօթում են և լսում են ժամասացութիւնը, բայց թէ ներքուստ ինչ են զգում, ինչ են հասկանում,—այդ է նշանակալը, որ ամենևին ուշադրութեան չէ առնւում։

Շատ քրիստոնեայ մարդիկ կարծում են, որ իրենք լաւ քրիստոնեայ են, երբ արտաքին ծէսերը կատարեցին, կրօնական տօները տօնեցին, Զատկին եկեղեցի գնացին, կերան և արբեցին։

Իւր մտքի պարզութեամբ՝ հաւատացող ժողովուրդը Զատկի տօնին այն ներքին մխիթարութիւնն ունի, որ վերջապէս ամբոխից չճանաչուած, կեղծաւոր փարիսեցիներից հալածուած և «ձայն բազմաց»-ից խաչուած Փրկիչն ազատուել է մարդկանց ձեռքից ու երկինք բարձրացել։

Այսօր քրիստոնեայ ամբոխը հաւատացած է, որ միայն առաջ էին մարդիկ քարասիրտ և կռապաշտ, եթէ այսօր Քրիստոսը նորից յայտնուելու և քարոզելու լինի մեր մէջ, ինքը՝ այդ քրիստոնեայ ամբոխը չի հալածիլ, չի խաչիլ Նրան, այլ կըպաշտէ, կըփառաբանէ։

Մի՞թէ այդպէս է. մի՞թէ խաւարն իսպառ անհետացաւ աշխարհից. մի՞թէ կոյր ամբոխը վերացել է. մի՞թէ այլևս գոյութիւն չունեն կեղծաւոր փարիսեցիները և սադուկեցիները, որոնք իրենց թուի, գրութեան և կապերի վրայ վստահացած՝ կոյր ամբոխը գրգռէին Քրիստոսի դէմ և գոչէին «ի խաչ հան զդա»... Մի՞թէ էլ չեն ապրում Պիղատոսներ, որոնք տեսնում են կոյր ամբոխի արարքը, տեսնում են անմեղութիւնը հալածուած, ճշմարտութիւնը ոտնակոխ եղած, բայց իրենց գլուխը պահպանելու համար լուանում են իրենց ձեռքերը և յետ են քաշւում։

Յարութիւնը հոգու մաքրութեան, սիրոյ տօնն է, որովհետև Քրիստոս ինքն իսկ է Սէրը և Ճշմարտութիւնը։

Թող շնորհէ մեզ Սէրը և Ճշմարտութիւնը մի կայծ Սիրուց, մի կայծ Ճշմարտութիւնից, որպէս զի կարողանանք հասկանալ և սիրել Սէրը, որ կարողանանք ճանաչել և փառաբանել Ճշմարտութիւնը խօսքով և գործով։

Թող լինի մեր կրծքում մի կայծ անվերջ Սիրուց, թող մեր հոգին ստանայ մի շունչ Ճշմարտութիւնից, և մենք կըդիմանանք, կապրենք և կըմեռնենք Սիրոյ և Ճշմարտութեան համար։

Ի՞նչ ենք մենք, եթէ ոչ Սիրոյ և Ճշմարտութեան փոշի...

Տօնենք Յարութեան, Ճշմարտութեան յաղթանակի տօնը։

Զատկի տօներից յետոյ «Նոր-Դար»-ի առաջիկայ համարը լոյս կըտեսնի ապրիլի 7-ին։

ԱՊՐԻԼԻ 1-Ը

Դարերի ընթացքում գործնականութիւն ստացած և ժողովրդի մէջ արմատացած սովորութիւններից մէկն էլ ամենայն տարի ապրիլի 1-ին իրար խաբելու տգեղ սովորութիւնն է, որ գոյութիւն ունի ո՛չ միայն հայերիս, այլ և բոլոր քրիստոնեայ ազգերի մէջ։ Այս հանգամանքն ինքնըստինքեան ցոյց է տալիս, որ այդ սովորութիւնը բոլոր քրիստոնեայ ազգերի սեպհականութիւնը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՉԻ՛Ր ՔԵԶ...

Ահա մի առեղծուած, որ հնագարեան իմաստութիւնը համարել է փիլիսոփայական ճարտարահիւս շէնքի անկիւնաքարը և որպէս անլուծելի թալիսման թողել է ապագայ սերնդի վճռին։

Եւ անցել են դարեր, տասնեակ դարեր, սակայն առեղծուածը մնացել է դարձեալ առեղծուած, կնճռւտ ու անլուծելի։

Ի՞նչ.. Մի՞թէ արդարև մինչև օրս մարդը չի կարողացել ճանաչել ինքն իրեն... Ո՛հ, սարսափելի գաղտնիք։

Բայց չէ՞ որ ոչինչ չի կարող դիմադրել մարդկային մտքի ու հանճարի զօրեղ հոսանքին, ոյժին։ Մարդկային կարողը երբէք չէ սահմանափակուել իրեն շրջապատող նեղ միջավայրով. նա ծովային ալիքի նման անդադար շարժուել է միշտ յառաջ, յառաջ.. Մարդու հետախոյզ աչքերը շարունակ ձգտել են դէպի վեր, դէպի անսահման և անժամանակ տիեզերքի անհունութիւնը, քաօսը... Նրա լռութիւն չճանաչող հանճարն այնտեղ անհաւատալի նուաճումներ է կատարել. նա զննել և ուսումնասիրել է տիեզերքի թաղնուած գաղտնիքները, անքննելի օրէնքները .. Նա մաթեմատիքական ճշտութեամբ չափել ու կշռել է շատ երկնային մարմիններ, աւելի ճշտօրէն որոշել է նրանց հեռաւորութեան, շարժման կանոնները, նրանց անցեալը, ներկան ու ապագան...

Ապա մարդը.. Մի՞թէ նա չկարողացաւ ճանաչել ինքն իրեն... Անբնական երևոյթ։ Ինչո՞ւ մարդը չդիմեց ինքնազննութեան. բայց չէ՞ որ աչքն իրեն լոյս չի տալիս։

Ո՛չ, ո՛չ. նա ուսումնասիրեց իրեն շրջապատող աշխարհը, իւր կեանքի և ապրուստի յարմարութեանց համար զարմանալի դիւրութիւններ ստեղծեց նա այնպիսի տարրեր գտաւ բնութեան մէջ և հնազանդեցրեց իւր հուժկու կամքին, որոնք նախապատմական մարդուն լոկ վնաս և աւերմունք էին պատճառում, նրա սրտին սնոտիական երկիւղ ու սարսափ ազդում։

Գոլորշի, ելեքտրականութիւն, հեռագրալար, հեռախօս, անյայտ ճառագայթներ. . Այս ամենն ստրկական խոնարհութեամբ հնազանդ է մարդուն։

Բայց հին առեղծուածը դարձեալ անլուծելի մնաց մարդկութեան համար և մի ինչ որ ներքին ձայն յամառ պահանջով կասես շարունակ գոչում է նրա ականջներին—ճանաչի՛ր քեզ..

Ո՞վ.. ե՞ս... Ո՛չ, ո՛չ քա՛ւ լիցի. ես շատ հեռու եմ այդ մոգական հանգոյցին մօտենալու յանդուգն յաւակնութիւնից։ Թող հոլովեն ու խոնարհեն այդ ճակատագրական պրոբլէմն ամեն ձևով ու ժամանակով այն մեծամիտ ընտրեալները, որոնք պատկառելի դիրք ունին գրաւած իմաստութեան կերտուածի գագաթին և շատ բարձր լինելով աշխարհից՝ թափառող մոլորակների նման անհուն ընդարձակութեան մէջ կուրօրէն ոլորւում են գիտութեանց արեգակի շուրջը։

Ե՞ս... ես, ապուշ ապիկար, մանկական ամաչկոտութեամբ հազիւ եմ վստահանում գլխակոր անցնել իմաստութեան բուրգի մօտով։ Սակայն ինչո՞ւ այդ աստիճան անտեղի երկչոտութիւն. յառա՜ջ, յառա՜ջ, պատանի...

Դիմում եմ առաջ, դիտում եմ շուրջս։

Գարո՜ւն է... Զուարթատես, գեղափայլ արևը երկնքի ջինջ բարձրութիւնից հրաւէր է կարդում մեռած ու թմրած բնութեանն արթնանալու, շարժուելու, գործելու։ Հողի սառն գրկում երկարատև անյոյս պառկած սերմերն ու արմատներն սկսում են դանդաղօրէն երերուել, կենդանանալ։

Ահա և առաջին ծաղիկները. նրանք, չկարողանալով տանել ցրտի ու խաւարի մահաբեր տիրապետութիւնը, կրկնակի թափով շտապում են օր-առաջ փշրել, խորտակել բռնադատ բանտարգելութեան կապանքն ու փականքը. նրանք ձգտում են դէպի լոյսը, դէպի ջերմութիւնը՝ աւետելու համար տառապեալ աշխարհին նոր կեանք և ազատ վայելք... Սակայն ցուրտ է տակաւին. ահա մի անակնկալ, անագորոյն սառնամանիք, և նոր գարնան, նոր կեանքի աւետաբեր այդ ինքնագոհ փափուկ ծաղիկները չկան այլ ևս, խամրել են ընդ միշտ նրանց ժպտաուրախ խնդավառ գոյներն ու նազելի գլխիկները թափուած են հողի սառցապատ մակերևոյթի վրայ։ Կրկին արև, կրկին ծաղիկների նոր խումբ, բայց աւելի դիմացկուն, աւելի զօրեղ։ Սակայն դարձեալ մի դառնաշունչ քամի ձիւնապատ հսկայ լեռներից, և ահա կրկին ամենայն ինչ հաւասարուեց սև հողի հետ։

Եւ գոյութեան ու մահի այս աւերիչ կռիւը տևում է այնքան ժամանակ, երբ վերջապէս արևը յաղթահարում է ուժասպառ ցրտին, լոյսը՝ խաւարին, և մահը տեղի է տալիս կեանքին։

Արար-աշխարհ ցնծագին աղաղակներով վերջ ի վերջոյ տօնում է կեանքի յաղթանակը. մարդիկ սերազեղուն սրտով աւետում են իրար Յարութեան հրաշափառ տօնը. սիրտս լցւում է հրճուանքով և ես ընդհանուրի հետ միասին բացականչում եմ բնազդմամբ.

—Կեցցէ՛, կեցցէ՛ յաւէրժ կեանքը։

Ի՞նչ, կեանքը յաղթում է մահին... Հաւատա՞նք արդեօք .. Ուրեմն կեղծ ու պատիր է եղել մարգարէի «հող էիր և հող դառնաս» բանաձևը... Ապա ինչ է ուսուցել մեզ դարերի փորձը. ազգերի վիճակը... մա՜հ, մա՜հ, մա՜հ.. Այո՛, մահն անխուսափելի է, նա ճակատագրական օրէնք է, որ ժամանակներից առաջ հրեղէն տառերով անյայտ ձեռներ նախագծեցին տիեզերքի գրքում։

Սակայն դառնանք դէպի մարդը, նրա կեանքի գարունը. չէ՞ որ այդ փոքրիկ հիւլէն էլ մի ընդարձակ տիեզերք է։

Տեսնենք։

Ահա ծնւում են մարդիկ. նրանցից շատերը վաղաբողբոջ ծաղիկների նման դեռ մանուկ հասակում զոհ են գնում բնութեան անխուսափելի պատահարներին. մեռնում է մի սերունդ, նրան փոխարինում են ուրիշները, թոյլերի տեղ ծնւում են աւելի դիմացկունները. բայց ինչ է պատում նրանց ապագայում. արդեօք դարձեա՞լ անժամանակ մահ. ո՛չ, դեռ երկար և դժուարին ուղի կայ նրանց առաջին։

Մարդը փորձի և վտանգի բովից անցնելով մարզւում ու զարգանում է հոգեպէս և մարմնապէս. նրա մէջ ապրելու պահանջը տարերական օրէնքի է փոխւում. գրգռուել է ախորժակը. ստամոքսն աւելի պահանջող է դարձել. պէտք է աշխատել, ուտել ու քնել։ Բայց չէ՞ որ աւելի հեշտ է գողանալ, զրկել, խլել, ասպատակել ուրիշի սեպհականութիւնը. ծագում են արիւնհեղութիւններ, սպանութիւններ, պատերազմներ, և գոյութեան կռիւը, ուժեղների՝ թոյլերին ուտելու բնազդը հռչակւում է օրէնք. ապահովութիւնը, արեան ծարաւը սրբագործւում են նրան։ Բայց գո՞հ է, բաւակա՞ն է այդչափով մարդը. ո՛չ, ստամոքսը, որկորը լիովին չեն կարողանում յագուրդ տալ մարդուն. նա զգում է իւր կեանքի աննպատակ դատարկութիւնը. նրան պակասում է մի ինչ որ շատ կենսական բան. նա անդադար որոնում է մի ինչ-որ բան, նա լարում է արտաքին հայեացքը, նայում է շուրջը, հեռուն և իրեն շրջապատող մէգ-մշուշի միջով ընդարձակութեան մէջ նշմարում է աղօտ լուսով փայլփլող մի բոց։ Մարդու հետաքրքրութիւնը կրկնապատկւում է. բացի անասնական կրքերից նրա մէջ առաջին անգամ արթնանում են հոգեկան յոյզեր, գրգիռներ։ Արդեօք այն հրեղէն բոցը կըջերմացնէ՞ նրա սիրտը, թէ անզգուշութեամբ ճրագին մօտեցող թիթեռնիկի նման կըխանձէ նրա թևերը։

լինելով՝ կորցնում է իւր մասնաւոր բնաւորութիւնը և կապ չունի ոչ մի ազգի այսպէս ասած ազգային սովորութիւնների հետ։

Անշուշտ ընթերցողի համար հետաքրքրական կլինի այդ սովորութեան ծագումն ու պատմութիւնը։

Դժբաղդաբար այդ անմիտ ու պախարակելի սովորութիւնն, ամենայն հաւանականութեամբ, հանգում է այն անպատկառ լուրի վրայ, որ տարածեցին Յիսուսի գերեզմանին զգուշացող կաշառուած պահապան զինուորները, Յիսուսի հրաշալի յարութեան մասին։

Յայտնի է, որ հրէից քահանայապետներին, ծերերին ու դպիրներին ամենևին հաճելի չէր, որ ժողովուրդն հաւատար ու համոզուէր, թէ Յիսուս Քրիստոսն իսկապէս յարութիւն առաւ. այս պատճառով էլ, երբ զարհուրուած պահապանները քաղաք վազելով պատմեցին քահանայապետներին Յիսուսի յարութիւնը, վերջիններս կաշառեցին զինուորներին և հարկադրեցին նրանց ասելու և հաւատացնելու ժողովրդին, որ «գիշերով, երբոր քնած ժամանակ, աշակերտներն եկել և գողացել են Յիսուսի մարմինը»։ Եւ այս համբաւը, ասում է աւետարանիչը, «տարածուեցաւ հրէաների մէջ, մինչև այսօր»։ Յիսուսի յարութեան հետևեալ տարիները, Երուսաղէմի քրիստոնեաները հրէաներին վիրաւորելու, ծաղրելու և արհամարհելու համար պէտք է որ տարին մի անգամ, այն օրը երբ Յիսուսի յարութեան տարեդարձն էր, սկսէին որևէ եղած բան կամ տեղի ունեցած անցք՝ չեղած հրատարակելու և կամ սուտը ճշմարտի տեղ պատմելու հրէաներին... Նրանց ձեռք առնելու համար ..

Երբ քրիստոնէութիւնը և քրիստոնեայ ժողովուրդը դուրս եկաւ Երուսաղէմի պատերից ու Հրէաստանի սահմաններից և տարածուեցաւ ի սփիւռս աշխարհի, այդ սովորութիւնն էլ, որպէս անցեալի յիշատակ, տարածուեցաւ բոլոր քրիստոնեայ ազգերի մէջ, միայն այն զանազանութեամբ, որ Երուսաղէմում նրանք խաբում և ձեռք էին առնում հրէաներին, իսկ Երուսաղէմից դուրս, ուր հրէաներ չկային, սկսեցին խաբել և ձեռք առնել իրար։ Այսպիսով ժամանակակից քրիստոնեան խաբելով ապրիլի 1-ին իւր ընկեր քրիստոնեային՝ վերջինիս յիմարացնում է իբրև ջհուդի, որ հաւատաց կաշառուած զինուոր պահապանի խօսքին և ընդունեց, որ իսկապէս «աշակերտները գողացել են Յիսուսի մարմինը»։

Բայց թէ ինչո՞ւ է այդ սովորութիւնը գործադրւում ապրիլի 1-ին, դրա պատճառն այն է, որ Յիսուսի խաչելութիւնը տեղի ունեցաւ հրէական Եփլէ (5533) թուականի Նիսան ամսի 23-ին, մեր մարտի 30-ին, պասեքի կամ բաղարջակերաց տօնի 6-րդ օրը։

Թաղուեցաւ նոյն ամսի 23-ի վերջին պահին, որ սկսւում էր ամսի 24-ը—մեր մարտի 31-ը, պասեքի 7-րդ վերջին և հանդիսաւոր շաբաթ օրն սկսուելուց առաջ և յարութիւն առաւ երրորդ օրը (օրն ըստ հր. 12 ժամ հաշուելով) ամսի 25-ին—մեր ապրիլի 1-ին, որ միաշաբաթն էր (նրանց երկուշաբթին, մեր կիրակին) լուսանում։

Այսպիսով այն տարին Յիսուսի յարութիւնը տեղի ունեցաւ ապրիլի 1-ին, ինչպէս և այս տարի Յիսուսի յարութիւնը մենք տօնելու ենք ապրիլի 1-ին։

Շատ նպատակայարմար և պատուաբեր կլինէր, եթէ իսպառ վերանար ապրիլի 1-ին խաբելու տգեղ սովորութիւնը, որ, ինչպէս ասացինք, ամենայն հաւանականութեամբ, ծագում է վերև յիշուած խիստ մեծ հանգամանքից... ինչպէս և ներկայումս ընդունուած է կարծել...

Թէրևս իւր ժամանակին այդ սովորութիւնը ծառայէր որևէ նպատակի, բայց այսօր այդ բանը միայն ամօթ կարող է բերել իւրաքանչիւր քրիստոնէի։

Ամեն բան իւր ժամանակն ունի *)։

Տաճատ աւ. քահ. Մարաղեան

---

*) Ի՞նչ փաստերի, ի՞նչ աղբիւրների հիմնուած վրայ ապրիլի 1-ի սովորութեան այդ բացատրութիւնն է տալիս տէր հայրը՝ չէ գրում. բարեկենդանին Թիֆլիսում կատարուող հրապարակային դիմակահանդէսներն Աղա-Մահմադ շահի՝ Թիֆլիսն աւերելու ժամանակից մնացած սովորութեան վերագրեցին, բայց այդպէ՞ս է։

Խմբ.

Ապրիլի 1-ից «Նոր-Դար» ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 8 րուբլի։

ԽՐՈՆԻԿՈՆ

Այս օրերս Թիֆլիսում վախճանուած յայտնի նաւթարդիւնաբերող Կ. Զուբալովը 100,000 ր. է կտակել Թիֆլիսում ժողովրդական տուն կառուցանելու համար այն պայմանով, որ տունը կառուցուի քաղաքի կեդրոնում, կոչուի իւր անունով և քաղաքի սեփականութիւնը դառնայ։

— Թիֆլիսի ձիաքարշ երկաթուղիների վրայ հսկող քաղաքային յանձնաժողովի անդամները մարտի 28-ին պ. Ռոբու հետ միասին դիտեցին Գոլովինսկի պրոսպեկտի, Վերայի դառիվայրի, Միքայէլեան պրոսպեկտի և վոկզալի գծերը և գտան, որ այդ գծերը շատ վատ դրութեան մէջ են պահւում։ Յանձնաժողովը մտադիր է այդ բանի համար տուգանքի ենթարկել անանուն ընկերութեանը։

— Վանքի աւագ եկեղեցու վերանորոգութիւնը դեռ չէ վերջացել։ Այդ հանգամանքը, ինչպէս երևում է, փորձանքի մէջ է ձգել այդ եկեղեցու պատուարժան միաբանութեան պատուարժան անդամների համբերութիւնը։ Մեծ և հարուստ ծուխ ունեցող միաբանութեան անդամները միաբանուելով որոշել են պահանջել իւր ծախքով վանքը վերանորոգող պ. Ա. Մանթաշեանից իրենց կրած «վնասները» և այդ մտքով նամակ են ուղարկել նրան։ Այդ քահանաների լոգիկայով, պ. Ա. Մանթաշեանը թէ յանցաւոր մարդ է և թէ աններելի յանցանք է գործել։ Յանցաւոր է՝ որովհետև հարուստ է, յանցանք է գործել՝ որովհետև վանքի աւագ եկեղեցու վերանորոգութիւնը յանձն է առել։ Որպէս զի պ. Ա. Մանթաշեանն իւր մեղքը կարողանայ քաւել՝ պարտաւոր է յիշեալ քահանաների եռյարկանի տների վրայ իւր ծախքով մի մի յարկ էլ աւելացնել։

— Ապրիլի 5-ին Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում նշանակուած է Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը 1900 թ. հաշիւը և 1901 թ. նախահաշիւը քննելու և վարչութեան երեք անդամ ընտրելու համար։

— Հալաբաղի հրապարակից սկսած մինչև Նաւթլուղ ձիաքարշ երկաթուղի անցկացնելու աշխատանքներն, ինչպէս իմանում ենք, կըսկսուին ապրիլի վերջից գիծն ամենայն հաւանականութեամբ պատրաստ կլինի մինչև աշունը։

— Երեկ, մարտի 30-ին, Բաթումի երկաթուղու արտակարգ գնացքով Թիֆլիս ժամանեց Բաւարիայի պրինց Գէորգն իւր սակաւաթիւ հետևորդներով։ Օտարերկրեայ հիւրերն իջևանեցին քաղաքիս առաջնակարգ հիւրանոցներում։ Պրինցն իւր հետևորդներով Բաթում կը վերադառնայ երկուշաբթի, ապրիլի 2-ին։

— «Կարս» լրագրի ասելով, առաջիկայ 1902 թւին Կարսում բացուելու է արհեստագիտական դպրոց դարբնոցային և ատաղձագործական բաժանմունքներով։ Դպրոցը պիտի բացուի արքունի գանձարանի հաշուով։

— «Կարս»ը հաղորդում է, որ Կարսի զինուորական նահանգապետ Ա. Ա. Սամօյլովը մարտի 23-ին գնացել էր Սարիղամիշ։ Այդ ուղևորութեան պատճառն այն էր, որ Թիւրքիայից ռուսաց սահմանն էին մտել մի խումբ աւազակներ, որոնք կողոպտել էին 25 բնակիչ, սակայն հանդիպելով ռուս սահմանապահ 50 հոգի զինուորների, վերստին իրենց երկիրն էին փախել։

— Խմբագրութիւնս ստացաւ բժ. Վահան Արծրունու ձեռնարկած «Բժշկի զրոյցներ» խորագրով մի շարք բրօշիւրների № 1-ը—«Մի խմիր»․ Թիֆլիս, 1901 թ., էջ 38, գինը 5 կ.։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԲԱԳՈՒԻՑ.—Այս օրերս հաղորդեցինք, որ տեղիս Բազարնայա փողոցում Զարրատ գիւղացի մի թուրք հանդիպելով իւր եղբօր երկու սպանիչներին՝ ատրճանակի գնդակով երկուսի կեանքին էլ վերջ դրեց։ Ներկայումս իմանում եմք, որ հէնց միևնոյն օրը, երբ յիշեալ դէպքը պատահեց Բագւում, սպանուածների ազգականները, լսելով յիշեալ իրողութիւնը, Զարրատ գիւղում սպանել են չարագործի երեք ազգականներին։

—

ՂԱՄԱՐԼՈՒԻՑ.—Տեղիս նոր պրիստաւ պ. Սկրիբնակին անցեալ օր Սարունչի Թուրք գիւղում ձերբակալեց աւազակ Մամադ Ալուն, որ Սիբիրից փախել էր մի քանի տարի առաջ։ Այս ձերբակալման հետևեալ օրը պրիստաւը նոյն գիւղում ձերբակալեց նաև մի ուրիշ Թուրքի, որ նոյնպէս մի քանի տարի առաջ մի Թուրքի սպանել և անյայտացել էր։ Ինչպէս ասում են, այդ Թուրքը եկել էր, որ փոխադրի իւր կնոջը իւր մօտ։ Երկու ձերբակալուածներին էլ անմիջապէս տարան Երևան։ Աւազակ Մամադ-Ալուն ձերբակալելիս, նրա մօտ գտնուեց բերդանի մի հրացան սակաւաթիւ փամփուշտներով։

—Մեծ պասն ահա համարեա թէ վերջացաւ, բայց ցաւով պիտի արձանագրենք, որ մենք ոչ մի քարոզ չլսեցինք։ Ո՞վ է մեղաւորն այդ անտարբերութեան համար։ Ցաւալի է և միանգամայն զարմանալի, թէ ինչո՞ւ հոգևոր իշխանութիւնն ուշադրութիւն չի դարձնում այս առթիւ մեր մամուլի էջերում յաճախ երևացած գանգատների վրայ, որոնք մնում են շարունակ գանգատներ և գանգատներ...։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աւագ հինգշաբթի երեկոյեան, Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում, Ոտնալուայի արարողութեան ժամանակ, նոյն եկեղեցու միաբան Ալէքսանդր քահանայ Տէր-Յովհաննիսեան, զգեստաւորուած, բեմից անիծել է այն երեխաներին, որոնք հաւաքուելիս են եղել եկեղեցում մոմ առնելու համար և ուրիշներից մոմ են խնդրելիս եղել։ Տէր-Հայրը, փոխանակ երեխաներին խրատելու որ հանգիստ մնան եկեղեցում, բացականչում է բեմից. «Ես ոչ մի ազգի եկեղեցում այնքան անկարգութիւն չեմ տեսել, որքան մեր հայաստանեայց եկեղեցում։ Ինչպէս երևում է, դուք ուսումնարանի աշակերտներ էք։ Ա՜յ, ձեզ հարամ լինի ձեր հագած այդ շորը»։ Այդ խօսքերն արտասանելիս, սակայն, մոռացել է, որ ինքը մի անկարգութիւն ուղղելու համար գործում է մի ուրիշ, աւելի մեծ անկարգութիւն։ Քահանայի այդ վարմունքը ժողովրդի մէջ տհաճութիւն և տրտունջ յարոյց եկեղեցում, ի մէջի այլոց, ներկայ էր և կոնսիստորիայի քարտուղար պ. Յարութիւն Տէր-Եսայեանը, և ի հարկէ ականատես եղաւ տեղի ունեցած այդ վարմունքին։

Վերոյիշեալ դէպքը մեր մէջ զարթեցնում է մի հարց.—Եթէ այստեղ Թիֆլիսի մէջ, ուր հայ քահանան որոշ չափով հասկացողութեան տէր պիտի լինի, սոյնանման տխուր մի դէպք է տեղի ունենում, ապա ինչե՜ր տեղի կունենան աչքից ու մտքից հեռու գիւղերում։ Սա մի տխուր փաստ է մեր հոգևորականների վարուեցողութեան, որի վրայ կրկին անգամ մատնացոյց ենք լինում, որպէս զի հոգևոր իշխանութիւնն այս առթիւ հարկաւոր եղած կարգադրութիւններն անէ։ Այլապէս մինչև երբ պիտի տևէ այս անկարգութիւնը մեր եկեղեցիներում և մինչև երբ մեր մամուլը պիտի զբաղուի հոգևորականների այս տեսակ աւելի քան տխուր արարքներով։

Ժամաւոր

Թիֆլիս, 30 մարտի

Մարդը գլխակորոյս վազ է տալիս դէպ այդ երևոյթական լոյսը. վերջինս դիւր է գալիս նրան, ջեռուցանում է նրա սիրտը, և նա սիրում է։

Սէ՛ր, սէ՛ր—լսւում է ամեն կողմից. ամենքը ծունկ են չոքում սիրոյ սեղանի առաջ, զոհ են մատուցանում. սէրը հռչակւում է սուրբ և աստուածային. հաստատւում է սիրոյ կուլտը, որը սակայն յարատև չի լինում. փոթորկալի ամպերը կուտակւում են և սիրոյ ջինջ հորիզոնի վրայ. սիրոյ շուրջն սկսւում են խարդաւանքներ, դաւ ու դաւաճանութիւն, ատելութիւն, կիրք, կեղծիք, հիասթափութիւն... սկսւում է արտասուքների հեղեղը, տարափը, որի հոսանքից մարում է սիրոյ կայծը։

Չորս կողմը դարձեալ տիրում է անթափանցելի խաւար, դատարկութիւն։ Մարդը կէս ճանապարհի վրայ մնում է շուարած, առանց ուղեցոյցի։ Սէրը կորցնում է իւր հմայքը. Նա հրատարակւում է անասնական և գազանական լպիրշ կրքերը յագեցնելու մի ստոր միջոց։

Եւ մարդկային կեանքի գարունն արդէն անցած է անդարձ ..

Եւ այսքան. միթէ արևի ջերմութիւնն ու կեանքի էներգիան այս թշուառ վախճանն ունեցան միայն... Տեսնե՜նք։

—

Անցել է ժպտուրախ գարունը. վրայ է հասել կրակոտ ամառը. արևն իւր բոլոր նետերը հաւաքած՝ երկնքի բարձրութիւնից շանթ ու հուր է տեղում աշխարհի վրայ, մարդկանց գլխին։ Անհետացել են ուշագրաւ ծաղիկների երփներանգ խմբերը—ծաղիկների՝ որոնց նման Սողոմոնն անգամ իւր բոլոր փառքի մէջ չէր պճնուել բնաւին։ Նրանց տեղ ծառերի ճղներին այժմս երևում են հասունացած պտուղներ. Նրանք դեղնել, կարմրել են և անուշ հիւթով լցուած՝ ուզում են վայր ընկնել. բայց բնութեան անտեսութիւնը մի առ ժամանակ արգելք է հանդիսանում նրանց այդ մտադրութեանը, և ակնապարար պտուղների վրայ առաջին անգամ գծագրւում են նկատելի խորշոմներ... Ծերութեան անսաստ ահաւասեաններ։ Կեանքի շրջափոխութիւնը, կասես,կասկածի է ենթարկւում։

Այս մր է մարդը. մարդու մէջ ևս կարծես արտաքուստ լաւած լինի կեանքը. Նա լուռ ու մունջ կեդրոնացել է իւր մէջ. Նրա ներքին աշխարհում կատարւում է մի ինչ-որ կատաղի կռիւ, սոսկալի հաշուետւութիւն իւր անցեալ ոճիրների ու մեղքերի վերաբերմամբ. Նրա մէջ, կարծես, բռնկել է բաբելոնական խարոյկը, որ այրում բորբոքում է նրա սրտի և հոգու մէջ կուտակուած անցեալ օրերի աղտեղութիւնն ու գարշութիւնները, նրա մոլի կրքերը, խոհերը, զգացմունքները։

Այստեղ արդէն ինքնաճանաչութիւնը, բանական կեանքն ու մտքի խոհականութիւնը հասնում են զարգացման ամենաբարձր աստիճանին, որից յետոյ հետզհետէ դիմում են դէպի անկումը, կատարեալ ոչնչացումը, մահը...

Այսպէս անցնում է և ամառը։

Արևմուտքում ահա կուտակւում են ամպրոպային ամպեր, աշխարհին սպառնում է փոթորիկ, հուր, որոտ։ Կայծակի հարուածը վայր է թափում ծառերի հասունացած պտուղները. կենդանիները ոտնակոխ են անում նրանց և տրորում ցեխի մէջ։ Ցիրուցան են լինում թռչունները, միջատները լռում։ Սառն հիւսիսից փչում են ցրտագին հողմերը. ամենայն ինչ բռնւում է մահու տագնապով և աշխարհի համար մօտալուտ մահը դառնում է անխուսափելի։ Ձիւնը ծածկում է ամեն ինչ։

Հասունութեան հասակում մարդու մէջ բորբոքւող հրդեհը նրանում առաջացնում է սոսկալի աւերմունքներ. չքանում է մարմնի թարմութիւնը, զուարթութիւնը. երբեմն հպարտ, իսկ այժմս խորշոմած դէմքի վրայ գոյանում են վաղաժամ կնճիռներ ու խորշոմներ. Նրա տեսքը դառնում է սոսկալի, գորշ ու դժգոյն։ Լքանում է հոգին, սրտի զարկը նուաղում, մաշում են յօդերը և կեանքի ոյժը նուաղում։

Մա՜հ, մա՜հ... ծեր ես,—յուսահատ աղաղակով կանչում է մարդը։ Մահը հեռու չէ. նա միշտ մեզ հետ է. մեր ուղեկիցն է օրօրոցից սկսած մինչև գերեզմանի դուռը. Նա մեր մէջն է բնակւում. նա կեանքի զուգընթաց ընկերն է։

Ցուրտ վերջին կայծն էլ շիջաւ։

Ի՞նչ, ուրեմն ես էլ պիտի մեռնեմ. մի՞թէ իմ յիշատակն էլ պիտի ջնջուի աշխարհի երեսից, որպէս մոռացուել է իմ նախահայրերինը մի՞թէ ես էլ պիտի հաւասարւեմ սառն հողի հետ, և իմ կեղծ բարեկամների սուտ արտասուքի ու շինծու հեծկլտանքի հետ միասին իմ անշունչ դիակի վրայ վերջին անգամ պիտի լըսուի մի յոռետես մելամաղձիկ ձայն. «Հող էիր և ի հող դարձցիս»...

Սա վերջին յիշողութիւնն է և միակ աւանդը, որ մարդը տանում է հետն այս աշխարհից։

Ե՜րեկ... Ես արդէն ճանաչում եմ ինձ. ես որպէս խոտ բուսայ, աճեցի, ուռճացայ. որպէս կենդանի արարած վայելեցի աշխարհի վայելքն ու վիշտը և վերջը որպէս փուշ հողմի արշաւասոյր թևերի վրայ սլացայ ու չքացայ...

Վե՞րջ... Ուրեմն դարձեալ յուսանք.

Եւ մի ներքին ձայն շշնջում է.

—Այո, այո...

Ահա կրկին գարուն է. մի աներևոյթ ձեռքի շարժումով չքանում են բուքն ու սառնամանիքը. կեանքը նորից սկըսում է եռալ. բնութիւնը երկունքի մէջ է։ Աստուա՜ծ իմ, այս ինչ կենդանի հեղուկ է, անմահական ջուր է, որով Դու ցօղում, ոռոգում ես ձմրան խժդժութեան զոհ գնացած բնութիւնը և բուժում նրա ժանտաժուտ վէրքերը։ Բացւում է ծաղկաբոյր գարունը վերակենդանանում է արար-աշխարհը և ապրում նոր ցնծալի կեանքով։

Ես ևս զգում եմ, որ բնածներին ու մեռածներին յարութիւն տուող այդ երկնաբուղխ շիթերից մէկն էլ ընկնում է իմ մէջը. Նա հիմնովին կերպարանափոխում է իմ ներքին աշխարհը, բնոյթը. ինձ թւում է՝ թէ ազատւում եմ դարերի ընթացքում իմ անձս գերող ու կաշկանդող մարմնի ծանրութիւնից. իմ մէջ զարթնում է անսահման սէր դէպի Արարչի ստեղծագործած հրաշակերտ աշխարհը. այն, որ ես կարծում էի, թէ անցողական է և մահացու, այժմ թւում է յաւերժական, անմահ... Երկնաբաշխ լոյսն իմ մէջ աճում, զարգանում է. Նա դուրս է վանում այնտեղից իմ սրտի և հոգու մէջ տիրապետող խաւարը, մառախուղը. նա իմ մէջ վերջնականապէս ջախջախում է իմ ոչնչութեան և աշխարհի ունայնութեան գաղափարը... սիրտս լցւում է սիրով ու հաւատով. աչքերս բարձրացնում եմ դէպի վեր, բայց ոչ դէպի կեղծիքի, մոլորութեան ու խաբէութեան վրայ կառուցուած այն խախուտ շէնքը, որի վրայ բազմած են աշխարհի կեղծ վարդապետները, այլ դէպի Ճշմարտութեան արեգակը, Սիրոյ աղբիւրը և Անմահութեան լոյսը, և իմ թեթևացած կրծքից դուրս է թռչում մի ցնծագին յաղթական աղաղակ.

—Ես անմահ եմ...

Այո, ես անմահ եմ, անմահ է համաշխարհային վշտով մաշմաշող իմ անդորր հոգին, իմ անձնուրաց սէրն առ մարդիկ և առ Աստուած, իմ անյողդողդ հաւատը դէպի Բարու, Գեղեցիկի և Ճշմարտութեան փառաւոր յաղթանակը... Այո, ես այժմ ճանաչում եմ ինձ և աշխարհի սուտ վարդապետների յոխորտ մտքի վիժմանք մեծահնչիւն ղառանցանքն ինձ թւում է անարգ մեռածի դատարկ հնչիւն, թէ՛

– Ճանաչի՛ր քեզ...

Տիգրան Վարդանեան

ԳՐԱՖՈՒՀԻ ՍՈՖԻԱ ՏՈԼՍՏԱՅԵԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԵՒ ՄԻՏՐԱՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ռուսաց սրբ. Սինոդի բերան «Церк. Вѣд.» թերթի №17 ի մէջ տպուած է գրաֆ Լ. Ն. Տոլստոյի կնոջ՝ Պետերբուրգի միտրապոլիտին ուղղած նամակը և միտրապոլիտի պատասխանը։ Ռուս աշխարհահռչակ գրողի կինը գրում է.

«Ձերդ բարձր սրբազնութիւն։ Լրագրների մէջ երեկ կարդալով իմ ամուսնուն՝ գրաֆ Լև Նիկոլայևիչ Տոլստոյին եկեղեցուց անջատելու մասին սինոդի արած անգութ կարգադրութիւնը և եկեղեցու հովիւների ստորագրութիւնների թւում տեսնելով նաև ձեր ստորագրութիւնը, ես չկարողացայ կատարելապէս անտարբեր մնալ այդ բանում։ Իմ վշտալի զայրացմունքը սահման չունի։ Եւ ես զայրանում եմ ոչ այն տեսակէտից, որ այդ թղթի շնորհիւ հոգեպէս պիտի կորչի իմ ամուսինը. դա մարդկանց գործը չէ, այլ Աստուծոյ գործը։ Մարդկային հոգու կեանքը կրօնական տեսակէտից ոչ ոքի, բացի Աստուծոյ, յայտնի չէ և, բարեբաղդաբար, հիմնական չէ։ Բայց այն եկեղեցու տեսակէտից, որին ես իմ պատկանում և որից երբէք չեմ հեռանայ, - մի եկեղեցի որ սահմանել է Քրիստոս օրհնելու համար Աստուծոյ անունով մարդկային կեանքի բոլոր ամենակարևոր քայլերը՝ մարդկային ծնունդները, պսակները, մահերը, վշտերն ու ուրախութիւնները...—որը բարձրագոյն պիտի յայտարարէ սիրոյ, ամենաներողութեան օրէնքը, սէր դէպի թշնամիները, դէպի մեզ ատողները, որը պէտք է աղօթի ամենքի համար,—այս տեսակէտից ինձ համար անհասկանալի է Սինոդի կարգադրութիւնը։ Այդ կարգադրութիւնը մարդկանց մէջ կըյարուցանէ ոչ թէ համակրանք (բացի գուցէ «Моск. Вѣд.» ից), այլ զայրոյթ և դէպի Լև Նիկոլայևիչը մեծ սէր ու համակրանք։ Արդէն մենք ստանում ենք այդպիսի սիրոյ և համակրանքի արտայայտութիւններ ամբողջ աշխարհից—և դրանց վերջը չի լինելու։ Չեմ կարող չյիշատակել նաև մի վիշտ, որ ես կրել եմ իմ լսած մի անհեթեթութիւնից. այդ անհեթեթութիւնն այն է, որ Սինոդը գաղտնի կարգադրել է քահանաներին, որ Լև Նիկոլաևիչի մարմինը մահից յետոյ եկեղեցի չտանեն։ Ո՞ւմն են ուզում պատժել.—մեռելին, որ արդէն ոչինչ չի զգում. մարդուն, թէ նրան շրջապատող մերձաւոր և հաւատացեալ մարդկանց։ Եթէ այդ սպառնալիք է, ապա ո՛ւմ և ինչի՞ դէմ է ուղղուած այդ սպառնալիքը։ Ամուսնուս եկեղեցի տանելու և նրա վրայ եկեղեցում աղօթելու համար միթէ չեմ գտնիլ այնպիսի օրինաւոր քահանայ, որը չի վախենալ մարդկանցից սիրոյ իսկական Աստուծոյ առաջ, կամ այնպիսի ոչ-օրինաւոր քահանայ, որին կը կաշառեմ մեծ փողեր տալով այդ բանի համար։ Բայց այդ ինձ հարկաւոր էլ չէ։ Ինձ համար եկեղեցու գաղափարը վերացական է, և եկեղեցու սպասաւորներ ես համարում եմ միայն նրանց, ով ճշմարտապէս հասկանում է եկեղեցու նշանակութիւնը։ Իսկ եթէ եկեղեցի ընդունենք այն մարդկանց, որոնք յանդգնում են իրենց չարկամութեամբ խանգարել ամենաբարձր օրէնքը—Քրիստոսի սէրը, այն ժամանակ մենք՝ իսկական հաւատացեալներս և եկեղեցի յաճախողներս վաղուց կը հեռանայինք այդ եկեղեցուց։ Եւ եկեղեցուց հեռանալու համար մեղաւոր են ոչ թէ մոլորուած մարդիկ, այլ նրանք, որոնք գոռոզաբար այդ եկեղեցու գլուխ են համարում իրենց և սիրոյ, հեզահոգութեան ու թողութեան փոխարէն հոգևոր դահիճներ են դարձել նրանց համար, որոնց Աստուած, թէկուզ հենց եկեղեցուց դուրս, աւելի հեշտ կը ներէ իրենց խոնարհ, երկրաւոր բարիքներից բոլորովին հեռացած և առ մարդիկ սիրով և օգնութեամբ լցուած կեանքի համար, քան եկեղեցու այն հովիւներին, որոնք շողակնեայ խոյր ու աստղեր են կրում, բայց պատժում են եկեղեցուց հեռացողներին։ Հերքել իմ ասածները կեղծաւոր պատճառաբանութիւններով՝ հեշտ է։ Բայց ճշմարտութեան և մարդկանց իսկական մտադրութիւնների խորին հասկացողութիւնը ոչ ոքի չի խաբիլ։

Գրաֆուհի Սոֆիա Տոլստայա

26 փետր. 1901 թ.»

—

Միտրապոլիտի պատասխանը.

«Յարգոյ տիկին Սոֆիա Ալէքսէևնա։ Ոչ թէ այն է անգութը, ինչ որ արել է Սինոդը ձեր ամուսնու՝ եկեղեցուց անջատուիլը յայտարարելով, այլ այն է անգութը, ինչ որ ինքն է իրեն արել հրաժարուելով Յիսուս-Քրիստոսի, կենդանի Աստուծոյ Որդու, մեր Քաւիչի և Փրկչի հաւատից։ Այդ հրաժարման վրայ էլ վաղուց պիտի թափէիք ձեր վշտալի զայրոյթը։ Եւ ի հարկէ տպագրուած թղթի մի կտորից չէ, որ պիտի կորչի ձեր ամուսինը, այլ այն բանից, որ նա երես է շրջել յաւիտենական կեանքի Աղբիւրից։ Քրիստոնեայի համար անիմաստ բան է կեանքն առանց Քրիստոսի, Որի ասելով «Որդուն հաւատացողը յաւիտենական կեանք ունի և անցնում է մահուանից ի կեանս, իսկ չհաւատացողը կեանքը չի տեսնիլ, այլ Աստուծոյ բարկութիւնը մնում է նրա վրայ» (Յովհան. III, 15, 16, 36, V, 24), ուստի և Քրիստոսին ուրացողի մասին այն միայն կարելի է ասել, որ նա անցել է կեանքից ի մահ։ Հէնց այս բանումն է ձեր ամուսնու կործանումը. բայց այդ կործանման համար մեղաւոր է ինքը միայն և ուրիշ ո՛չ ոք։ Քրիստոսի հաւատացեալներից է բաղկացած Եկեղեցին, որին, ձեր ասելով, պատկանում էք դուք, և հաւատացեալների, իւր անդամների համար է այդ Եկեղեցին օրհնում Աստուծոյ անունով մարդկային կեանքի բոլոր ամենակարևոր քայլերը՝ մարդկային ծնունդները, պսակները, մահերը, վշտերն ու ուրախութիւնները, բայց երբէք չի անում և չի կարող նա անել այդ բանն անհաւատների համար, կռապաշտների համար, Աստուծոյ անունը հայհոյողների համար, իրենից հեռացողների համար, նրանից ոչ աղօթք, ոչ օրհնութիւն ըստանալ չցանկացողների համար և առհասարակ այն բոլորի համար, որոնք նրա անդամը չեն։ Ուստի այդ եկեղեցու տեսակէտից Սինոդի կարգադրութիւնը կատարելապէս հասկանալի է և պարզ՝ ինչպէս Աստուծոյ օրը։ Եւ սիրոյ ու թողութեան օրէնքը դրանով ամենևին չի խանգարւում։ Աստուծոյ սէրն անսահման է, բայց նա ևս ներում է ոչ ամենքին և ոչ ամեն բանի համար։ Սուրբ Հոգուն հայհոյելը չի ներւում ո՛չ այս, ոչ այն կեանքում (Մատթ. XII, 32,)։ Աստուած մարդուն միշտ որոնում է Իւր սիրով, բայց մարդը երբեմն չի ուզում ընդունել այդ սէրը և փախչում է Աստուծոյ Երեսից, ուստի և կործանւում է։ Քրիստոս խաչի վրայ աղօթում էր իւր թշնամիների համար, բայց նա ևս Իւր առաջին քահանայական աղօթքի մէջ արտասանեց իւր սիրոյ համար մի դառն խօսք, թէ կորաւ կորստի որդին (Յովհան. XVII, 12.)։ Ձեր ամուսնու մասին, քանի նա կենդանի է, կարելի չէ դեռ ևս ասել, թէ նա կորած է, բայց բոլորովին ճըշմարտութիւնն է ասուած նրա մասին, թէ նա անջատուել է եկեղեցուց և նրա անդամը չի կազմում, մինչև որ զղջայ և վերստին յարի Նրան։ Իւր յայտարարման մէջ այս մասին խօսելով Սինոդը վկայեց միայն գոյութիւն ունեցող փաստը, ուստի և զայրանալ նրա վրայ կարող են միայն նրանք, որոնք չգիտեն, թէ ինչ են գործում։ Դուք համակրութեան արտայայտութիւններ էք ստանում ամբողջ աշխարհից։ Չեմ զարմանում այդ բանի վրայ, բայց կարծում եմ, որ դրանում մխիթարուելու ոչինչ չունիք։ Կայ մարդկային փառք և կայ Աստուածային փառք։ «Մարդկային փառքը խոտի ծաղկի պէս է. խոտը չորացաւ և նրա ծաղիկը թափուեցաւ, իսկ Տիրոջ խօսքը մնում է յաւիտեան» (Պետր. I, 24, 25.)։ Եթէ անցեալ տարի լրագրները լուր տարածեցին, թէ գրաֆը հիւանդ է, եկեղեցու պաշտօնեաների համար մի այսպիսի հարց ծագեց իւր ամբողջ զօրութեամբ. պէտք է արդեօք նրան՝ հաւատից և եկեղեցուց անջատուածին արժանացնել քրիստոնէական թաղման և աղօթքների։ Դիմումներ եղան Սինոդին, և Սինոդը քահանաներին ի հրահանգութիւն գաղտնի կերպով տուեց և կարող էր տալ միայն մի պատասխան՝—պէտք չէ, եթէ մեռնի առանց վերականգնելու իւր յարաբերութիւնը եկեղեցու հետ։ Այստեղ ոչ ոքի դէմ սպառնալիք չկայ, և ուրիշ պատասխան չէր կարող լինել։ Եւ ես չեմ կարծում, թէ գտնուի մի որևէ, թէկուզ ոչ օրինաւոր, քահանայ, որը վստահանայ գրաֆի վրայ քրիստոնէական թաղման կարգ կատարել, իսկ եթէ կատարի էլ, ապա անհաւատացեալի այդպիսի թաղումը սրբազան ծիսի յանցաւոր պրոֆանացիա կլինի։ Բայց և ինչո՞ւ բռնութիւն գործել ձեր ամուսնու վրայ։ Չէ՞ որ, անտարակոյս, նա ինքը չի կամենում, որ իւր վրայ քրիստոնէական թաղման կարգ կատարուի։ Քանի որ դուք, որ կենդանի մարդ էք, ուզում էք ձեզ եկեղեցու անդամ համարել, և եկեղեցին իսկապէս կենդանի, խոհական էակների միութիւն է յանուն կենդանի Աստուծոյ, ապա իրենք իրենց արդէն ջրւում են ձեր այն խօսքերը, թէ եկեղեցին ձեզ համար վերացական գաղափար է։ Եւ ի զուր դուք յանդիմանում էք Եկեղեցու սպասաւորներին, թէ նրանք բարկանում են և խանգարում Քրիստոսի աւանդած սիրոյ բարձր օրէնքը։ Սինոդի գործողութեան մէջ այդ օրէնքի խանգարում չկայ։ Դա, ընդհակառակը, սէր է, որով Սինոդը կոչում է անում ձեր ամուսնուն, որ վերադառնայ դէպի եկեղեցին, և կոչում է անում հաւատացեալներին, որ աղօթեն նրա համար։ Եկեղեցու սպասաւորներին նշանակում է Տէրը, այլ ոչ թէ նրանք իրենք են, որ գոռոզաբար, ինչպէս դուք էք ասում, նրա գլուխն են համարում իրենց։ Նրանք շողակնազարդ խոյր ու աստղեր են կրում, բայց այդ բանը նրանց պաշտօնի մէջ ամենևին էական նշանակութիւն չունի։ Նրանք հովիւ էին մնում նաև ցնցոտի հագած և անարգուած ու հալածուած ժամանակ, հովիւ կմնան նաև միշտ, թէկուզ հարկադրուած լինեն նորից ցնցոտի հագնելու, ինչքան էլ որ հայհոյեն նրանց և ինչպիսի արհամարհական անուններ էլ որ տան նրանց։ Ի վերջոյ ներողութիւն եմ խնդրում, որ ձեզ իսկոյն չպատասխանեցի։ Ես սպասում էի, մինչև որ անցնի ձեր զայրոյթի առաջին, սուր թափը։ Թող Տէրն օրհնի ձեզ ու պահի և գրաֆին—ձեր ամուսնուն—ողորմի։

Անտոնիյ, միտրապոլիտ ս. Պետերբուրգի

1901 թ. մարտի 16.»

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՌԵՊԵՐՏՈՒԱՐԸ ԵՒ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ

—

Հայ մամուլի մէջ կրկին անգամ բարձրացել է հայոց թատրոնի ռեպերտուար կազմելու խնդիրը։ Խնդիր նոր չէ, շատ հին է և պարբերաբար վերանորոգւում է։ Հարկաւ, երբ կայ թատրոն, պիտի լինի և ռեպերտուար։ Զարմանալին այն է, ներկայ դէպքում, որ մեղանում ռեպերտուարի խնդիրը բարձրացնում են ոչ թէ թատերական վարչութիւնները, կոմիտեները, ոչ թէ հասարակութիւնը, այլ իրենք դերասանները, որոնց քմահաճոյքից է եղել կախուած մինչև այսօր հայկական թատրոնի ոչ միայն ռեպերտուարը, այլ և հայ լեզուն, որ ոչ մի տեղ այնքան չի աղաւաղուել և ենթարկուել բարբարոսական պրոֆանացիայի, որքան հայկական բեմի վրայ։

Թատերական և այլ հասարակական գործերում, ըստ երևոյթին, մենք աշակերտում ենք Եւրոպային։ Արդ՝ տեսնենք ինչպէս է դրուած ռեպերտուարի խնդիրը եւրոպական թատրոններում։ Ոչ մի քաղաք չունի այնքան թատրոններ, որչափ Պարիզը, և ոչ մի տեղ հասարակական կեանքն այնքան նոր թատերական երկեր չէ արտադրում, որքան Պարիզը, ուստի բաւականանանք Պարիզի թատրոններով։ «Կոմեդի-ֆրանսէզ» առաջնակարգ դրամատիքական թատրոնը իւր ընդհանուր պատմականօրէն զարգացող ռեպերտուարից ի զատ ունի տարեկան ռեպերտուար։ Եւ այդ տարեկան ռեպերտուարի մէջ մտնող հին և նոր պիէսների թիւը երբէք երեսունից կամ քառասունից չէ աւելանում։ Ի նկատի պէտք է ունենալ և այն հանգամանքը, որ 8—9 ամիս տևող թատերական սեզոնում, ամեն օր ներկայացումներ են լինում և երբեմն նոյն իսկ օրընը երկու անգամ, այսինքն ցերեկը և երեկոյին։ Միևնոյն պիէսը, կլասիքական թէ հասարակական, հին թէ նոր, միևնոյն սեզոնի ընթացքում կրկնւում է 10, 20, 30 և աւելի անգամ, նայելով նրա յաջողութեան, կամ հասարակութեան սըրամադրութեան։

Այդ կողմից «Կոմեդի ֆրանսէզ»-ը դեռ համարւում է ամենաչափաւորը, որովհետև Պարիզի միւս թատրոնները, օրինակ՝ Ճատլէ, Ռէնէսանս, Սառա-Բեռնար, Ժիմնազ, Վոդվիլ, Անտուան, Պալէ Ռօյալ» և այլն ամբողջ սեզոնի ընթացքում անընդհատ շարունակ ներկայացնում են երբեմն միևնոյն մի հատիկ պիէս, երբեմն երկու, երեք, յամենայն դէպս ոչ աւելի քան տասն պիէս. և այդ ամբողջ սեզոնի ընթացքում, երբեմն հաշուելով նաև ամառուան ամիսները, երբ շատ թատրոններում ներկայացումները չեն դադարում։

Օդէօն թատրոնում, «Պատմական դղեակ» պիէսն այս տարի տրւում էր 130-րդ անգամ և դեռ կըշարունակուի։ «Կարմիր գլխարկը» Ճատլէում տրւում է 200 րդ անգամ և դեռ շարունակւում է։ «Սան-Ժէնը» Վոդվիլում տրուեց 500 անգամ, գրեթէ անընդհատ, ամեն օր։ «Էգլոնը» (Արծուիկ) Սառա-Բեռնարի թատրոնում տրուեց 200 անգամից աւելի և այլն։ Ամենը մի առ մի թուել մեզ անհնարին է, որովհետև շատ բազմաթիւ են։

Ճշմարիտ է, այստեղ մի ուշադրութեան արժանի հանգամանք կայ. այդ այն է, որ Պարիզի մօտ չորս միլիոն ժողովրդից իւրաքանչիւրը հետաքրքրւում է իւրաքանչիւր պիէսով և ցանկանում է այն տեսնել, այդ պատճառով հարկ է լինում իւրաքանչիւր պիէս հարիւրաւոր անգամներ կրկնել. բայց դրան կից մի այլ երևոյթ ևս կայ, որ հարիւր հազարաւոր անձինք միևնոյն պիէսը տեսնելու են գնում մի քանի անգամ։

Եթէ Պարիզի թատրոններում որ և է պիէս յաջողւում է և թատրոնը շարունակ լիքն է լինում հասարակութեամբ, այդ ո՛չ թէ այն պատճառով, որ թատրոնն ունի որոշ ռեպերտուար (հարկաւ, պիէսի արժանիքն իւր նշանակութիւնն ունի), այլ որովհետև թատրոնն ունի կազմակերպուած դերասանական խումբ, ուր իւրաքանչիւր ժանրի դերերի համար առանձին երեք արտիստներ կան, արտիստներ՝ որոնք յատուկ մասնագիտական պատրաստութիւն ունին իրենց սահմանուած դերերն ուսումնասիրելու և կատարելու համար, արտիստներ՝ որոնց գեղարուեստական ճաշակը լրացնում է պիէսի թերին, արտիստներ, որոնք ոչ միայն գիտեն իրենց մայրենի լեզուն, այլ որոնց լեզուն, արտասանութիւնը, առոգանութիւնն օրինակելի են նոյն իսկ դպրոցական ուսուցիչների համար։

Արդ՝ ինչ կարող է անել ամենաընտիր ռեպերտուարն, եթէ այդ ռեպերտուարը կատարելու կարողութիւն ունեցող թատերական, դերասանական խումբ չլինի։

Ուշադրութեամբ դիտելով այն թատերական ռեպերտուարը, որ ունի այժմ կովկասեան հայոց թատրոնը, պէտք է խոստովանել, որ այդ ռեպերտուարը ոչ միայն աղքատ չէ, այլ համեմատաբար ընդհակառակն հարուստ է և մինչև անգամ շատ հարուստ։

Որակութեան մասին չէ մեր խօսքը, այլ քանակութեան մասին։

Հայ թատրոնը բացի ինքնուրոյն պիէսներից, ինչպէս են Գ. Սունդուկեանի աքանչելի «Պէպօն», «Խաթաբալան», «Քանդած Օջախը», մինչև անգամ «Ամուսինները», ունի նոյնպէս անհագին թարգմանական ռեպերտուար՝ Շէքսպիրից, Շիլլերից, Իբսէնից, Զուդերմանից, Օստրովսկուց, Կոպպէից, թարգմանութիւններ՝ որոնց թիւը հարիւրներից անցնում է, որոնք մինչև այժմ մնացել և պահպանել են Ռուսիայում հայոց թատրոնը։ Բայց խնդրում ենք ցոյց տաք, թէ հայկական թատերական ռեպերտուարի հարստանալուն հետ զուգահեռաբար քանի՞ բեմական ոյժեր են աւելացել այն ողբալի աւերակների վրայ, որ կրում է «հայ դերասանական խումբ» անունը։

Թատրոնական ռեպերտուար պատրաստելը դժուար չէ. քաղաքակրթուած աշխարհում անհագին թուով պիէսներ կան, որոնց կարելի է թարգմանել և փոխադրել հայ բեմի համար, բայց հօ չէք կարող այնպիսի հրաշք գործել, որ ֆրանսիական և գերմանական դերասաններն սկսեն հայերէն լեզուով խաղալ. դրա համար անհրաժեշտ են հայ արտիստներ։

Ուրեմն թոյլ տուէք մեզ կարծել, որ հայ թատերական ռեպերտուարից առաջ պէտք է մտածել հայ թատերական արտիստիքական կազմակերպուած խումբ ունենալու մասին։

Մեզ կասեն, որ մենք արտիստիքական խումբ ունինք. իսկ մենք կըպնդենք, որ չունենք և այդ եղածն այն չէ։ Այժմեան հայ թատերական խումբը, որ կապալուած էր Բագւում, մեզ շատ մօտ ծանօթ է և մի ամբողջ տարի այդ խումբը կառավարելու պատիւն ենք ունեցել իբրև ռեժիսոր և ցաւօք սրտի եկել ենք այն եզրակացութեան, որ այժմեան հայկական թատերական խումբը կատարելապէս թերի է և նրա երբեմնակի, շատ քիչ յաջողութիւնը պէտք է վերագրել միայն այն անյագ ծարաւին, որ զգում է ժողովուրդը և որից հայ ինտելիգենտ դասակարգն օգտուելու շնորհքը չունի։

Հայ թատրոնի ամենամեծ զէնքը, նրա գեղեցկութեան ամենամեծ արտայայտիչը հայ լեզուն է, իւր բոլոր ճիւղաւորութիւններով։ Արդ՝ ցոյց տուէք մեզ մի հայ արտիստ ներկայ խմբից, որ գէթ հեռաւոր գաղափար ունենայ այդ լեզուական նրբութեանց վրայ. ցոյց տուէք մէկը, որ հասկանայ հեղինակի կամ թարգմանչի գործ դրած լեզուական նրբութիւնները և կարողանայ արտայայտել այդ նրբութիւնները. ցոյց տուէք մէկը, որ կարողութիւն ունենայ ազատել իւր մայրենի գաւառաբարբառի ազդեցութիւնից և կարողանայ արտասանել կամ առոգանել այնպէս, ինչպէս կցանկանար հեղինակը կամ թարգմանիչը, որ որոշ լեզու կամ որոշ բարբառ գործածելով՝ կամեցել է բնորոշել այս կամ այն միջավայրերը։

Օ՜, և միթէ սրանք բեռագրեր չեն մեր «արտիստների» համար, որոնք դեռ «խօսակցութեան» փոխարէն «խօսացկութիւն» են արտասանում։

Ամեն դէպքերում մենք վարժուել ենք հայ ժողովրդին մեղադրել և հրապարակ հանել նրա յետադիմութիւնը և նրա անուսումնասիրութիւնը։ Այո, հայ ժողովուրդը շատ բաներումն է մեղաւոր, բայց ոչ թատրոնական խնդրում։

Հայկական թատրոնը մինչև այսօր՝ պահպանել է հայ ժողովուրդը և նա անշուշտ աւելի եռանդով կըպահպանէ նրան, եթէ միայն այդ թատրոնի դերասանական խումբը վերանորոգուի եթէ ոչ բոլորովին, գէթ թարմանայ նոր ոյժերով, որոնք աւելի լուրջ կվերաբերւքուեն Թատրոնական գործին, քան նրա այժմեան ներկայացուցիչներից շատերը։

Մենք համաձայն չենք, ամենեին համաձայն չենք այն մտքին, թէ հայ բեմական այժմեան գործիչները նահատակներ են։ Երբէք։ Այդ կարելի է ասել Ամերիկեանի, Աղամեանի, Չմշկեանի մասին, բայց ոչ այժմեան խմբի մասին։ Ի նկատի ունեցէք, որ այդ ասպարէզն այժմ վարձատրում է մարդկանց և լաւ է վարձատրում, և մինչդեռ հայ գրագէտներն անխտիր զկտում են քաղցից, չկայ մի դերասան, որ ռոճիկ չստանայ և նրանց մէջ կան այնպիսիք, որ մինչև 600 րուբլի ամսական են ստանում։

Մի հանգամանք ևս ի նկատի պէտք է ունենալ։ Մինչև այժմ հայ միջին ինտելիգենտը երբ ոչ մի գործի ընդունակ չէր լինում, գնում էր «տէրտէր» դառնալու, իսկ՝ այժմ գնում է դերասան դառնալու, որովհետև այդտեղ «հաց» կայ։

Այս հիմունքների վրայ՝ մեզ թւում է, որ պարոնայք «արտիստ»ներն իրաւունք չունին գանգատուելու մեր ռեպերտուարից։ Եւ ոչ թէ ռեպերտուար պէտք է կազմել, այլ պէտք է վերանորոգել դերասանական խմբի կազմակերպութիւնը։ Իսկ թէ ինչպէս, այդ մասին մենք դեռ կխօսենք։

Ս. Հախումեան

Փարիզ, 2 ապրիլի (ն. տ.)։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

«Ռուսսկ. Վեդ.»-ի Բեռլինի թղթակիցը հեռագրում է, թէ մեծ ուշադրութիւն է գրաւել «Köln. Zeit.»-ի մէջ լոյս տեսած մի կիսապաշտօնական յօդուած, որի վերնագիրն է «Քաղաքական դրութեան ռաթիւ»։ Յօդուածի մէջ ասւում է, թէ եռապետական դաշնակցութեան հակառակորդներն աշխատում են երերել այդ դաշնակցութեան հիմքն այն սխալ ենթադրութիւնն ունենալով, թէ Գերմանիան վախենում է, որ Իտալիան մօտենայ Ֆրանսիային. մինչդեռ ճիշտը հենց հակառակն է, այսինքն Գերմանիայի համար ոչինչ այնքան ցանկալի չի կարող լինել, քան այն, որ Իտալիան բարի յարաբերութիւններ ունենայ Ֆրանսիայի հետ։ Այդպիսի յարաբերութիւններն ամենևին հակառակ չեն եռապետական դաշնակցութեան նպատակներին, ինչպէս հակառակ չեն նոյն նպատակներին Գերմանիայի այն ջանքերը, ու նա գործ է դնում Ռուսիայի և Անգլիայի հետ բարեկամութիւն պահպանելու համար։ Մեծ սխալմունք կլինէր, եթէ գերմանա-իտալական քաղաքական յարաբերութիւնները փչացնէին մաքսային պատերազմ յարուցանելով։ Ի՛նչ վերաբերում է Անգլիային, Սոլսբըրիի արտաքին քաղաքականութիւնը, որը հիմնուած է Պալմերստոնի այն հին աւանդականութեան վրայ, թէ պէտք է ուրիշ պետութիւններից օգուտ քաղել անգլիական շահերի համար,—այդ քաղաքականութիւնն աւելի ու աւելի անաջողութիւններ է կրել։ Ի վերջոյ յօդուածի մէջ խօսւում է Չինաստանին վերաբերեալ քաղաքականութեան մասին և այն նկատողութիւնն է անում, թէ Անգլիան որքան էլ աշխատի, նրան չի աջողիլ Ռուսիային դուրս մղել Մանջուրիայից։ Գերմանիայի համար միակ խնդիրն այն է, որ նա բաւարար չափով ապահովի իր արշաւանքի համար արած ծախքերի հատուցումը. այս պատճառով գաղութների տեսուչը գնաց Լոնդոն և պարզեց այնտեղ, որ զատկական տօներից յետոյ դեսպանները Պեկինում կփորձեն պատերազմական ծախքերի հատուցումն ապահովել տուրքերի նոր աղբիւրներ ստեղծելով, այնպէս որ այդ նոր աղբիւրները լինեն եւրոպական վերահսկողութեան տակ և ծովային մաքսերն էլ շատ չբարձրացնեն։ Երբ այս բանն աջողուի, Գերմանիան յետ կկանչի իր զօրքերը և կթողնի Չինաստանը։

—

ԹՈՒՐՔԻԱ

Օտարոտի տեսարան էր ներկայացնում սուլթանի պալատի հանդիսասրահը, երբ ձեռքը համբուրելու հանդիսաւոր արարողութեան միջոցին յանկարծ երկիրը շարժուեց և պատերն սկսեցին օրօրուել։ Ինչպէս հաղորդում են Կ. Պոլսից «Frank. Zeit.»-ին, ոչ ոքի մտքովը չանցաւ սկզբում, թէ երկրաշարժ է պատահել։ Ամենքը կարծեցին, թէ պալատը յօդս են ցնդեցնում չարագործները։ Միմիայն սուլթանն էր, որ իրեն չկորցրեց և այդ պատճառով աղէտ տեղի չունեցաւ. Որովհետև դահլիճում կար մօտ 3000 հոգի (?), ապա շատ զոհեր կըպատահէին, եթէ սուլթանը լսէր իր մի քանի մերձակայ մարդկանց խորհուրդը, որոնք առաջարկեցին նրան դուրս փախչել պալատի պարտէզը։ Երկրաշարժի ժամանակ զրնգզրնգացին ահագին ճաղերը, օրօրուեցին հսկայական սիւները և առաստաղից ծեփի մի ահագին կտոր վայր ընկաւ։ Մի քանի սպաներ թրերով ջարդեցին լուսամուտների ապակիները և դուրս թռան պարտէզը, որով մեծ իրարանցում ընկաւ։ Դիւանագէտների յատկացուած վերնայարկում մի քանի տիկիններ, դրանց թւում իտալական դեսպանի կինը, ուշաթափ եղան, միւսները վազեցին դուրս փախչելու։ Պետական խորհրդի նախագահ Սայիդ-փաշան և մարշալ Ֆուադ-փաշան շտապով մօտեցան սուլթանին և աղաչում էին նրան, որ փրկի իրեն պարտէզը դուրս փախչելով։ Սուլթանն իջաւ գահից, բայց իսկոյն բարձրացաւ ու նստեց։ Սայիդը փորձեց դարձեալ մանանիշ անել նրան վտանգը, բայց սուլթանը խստիւ հրամայեց փաշային, որ կանգնի իր տեղը և միևնոյն ժամանակ նուագածուների խմբին հրամայեց, որ ընդհատուած նուագածութիւնը շարունակի։ Յետոյ չէյխ-իւլ-իսլամին առաջարկեց, որ մի կարճ աղօթք կարդայ։ Այս բանի շնորհիւ ամեն ինչ խաղաղեց։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կիտչեները Պրետորիայից հաղորդում է, որ Պլումերը Պիտերսբուրգը գրաւելիս վերցրել է 60 գերի և մի թնդանօթ և ոչնչացրել է բազմաքանակ ռազմամթերք ու դինամիտ։

—Ֆրանսիական հանրապետութեան նախագահը Նիցցայից մեկնեց մարտի 28 ի առաւօտեան և հասաւ Վիլլաֆրանկա 6 ժ. 40 ր., որտեղ նրան ընդունեցին Լանըսսան և ծովակալ Մեգրէ։ Ափ ելած ծովակալ Բիրիլև և ռուս սպաները ողջունեցին նախագահին։ Ծովակալ Բիրիլևը Լուբէին խնդրեց, որ այցելէ ռուսաց ծովակալի նաւը, Լուբէն ընդունեց այդ հրաւէրը։ Այցի ժամանակ հան. նախագահը, ի միջի այլոց, Բիրիլևին յանձնեց Պատուաւոր Լէգիոնի սպայական մեծ խաչը։ Բիրիլևը նախագահին բարեբերթ մաղթեց, որից յետոյ Լուբէն անցաւ «St.-Louis» նաւը և մեկնեց Տուլոն. ռուսաց նաւերի մօտով անցնելիս ռուս նաւաստիները նրան ողջունում էին «ուռա» աղաղակներով. Ֆրանսիական ամբողջ նաւախումբն ուղեկցում է նախագահին։

—Ռուս ծովակալ Բիրիլևն ու իր սպաները Վիլլաֆրանկա հասան ժամը 7 ին, և նրանց իսկոյն տարան Լուբէի մօտ։ Նախագահի հետ էր Դելկասսէն։ Ծովակալ Բիրիլևն ասաց ֆրանսերէն, թէ Թագաւոր Կայսրից յանձնարարութիւն է ստացել ողջունելու ֆրանս. հան. նախագահին և այդ յանձնարարութիւնը կատարում է մեծ պարծանքով, մանաւանդ որ ինքն երբեմն Բրեստի քաղաքացի էր դարձած և թէ Ֆրանսիան մի տեսակ իր հայրենիքն է համարում։ Լուբէն ասաց, թէ շատ զգացուած է ռուսաց Կայսրի յանձնարարութիւնից և խնդրեց ծովակալին, որ Նորին Կայսերական Մեծութեանը յայտնի իր ամենաանկեղծ շնորհակալութեան զգացումները։ Լուբէն և Դելկասսէն դրանից յետոյ զրուցատրում էին ռուս սպաների հետ, որոնց Լուբէն այնուհետև ճաշի հրաւիրեց։ Ճաշի ժամանակ նախագահը խմեց Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհիների, Կայսերական Տան և Ռուսիայի կենացը։ Նրա ճառը հետևեալն է. «Ծովակալ, ձեզ յանձնարարելով, որ գաք այստեղ ողջունելու ֆրանսիական հանրապետութեան նախագահին, Նորին Մեծութիւն ռուսաց Կայսրը նորից ապացուցեց դէպի բարեկամ ու դաշնակից ազգն ունեցած Իւր զգացմունքի յարատեւութիւնը։ Ես համոզուած եմ, որ բոլոր ֆրանսիացիների զգացումների թարգմանը կլինիմ, եթէ առաջարկեմ կենացը Կայսրի, Կայսրուհիների, Կայսերական Տան, մեծ Ռուսիոյ Կայսրութեան և ռուսաց նաւատորմղի, որի ներկայացուցիչն էք դուք»։ Ծովակալ Բիրիլևը պատասխանեց. «Թոյլ տուէք ինձ առաջարկեմ հանրապետութեան նախագահի և Ֆրանսիայի, իմ երկրորդ հայրենիքի կենացը»։ Ճաշից յետոյ ռուս սպաները սրտագին զրուցատրում էին ֆրանսիական սպաների հետ, իսկ ժամը 9 ին հրաժեշտ տուին Լուբէին և վերադարձան Վիլլաֆրանկա։

«ՆՈՐ ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բագու. պ. Լըստուրին.—Ձեզ դէմ ուղղուած նամակին (Աղէք. Նաջարեանի) պատասխանելով պնդում էք, որ ձեր հաղորդածը բուն եղելութիւնն է, որ տէր Յովհաննէսը բուֆետներում, ճաշարաններում համախօսական է ստորագրել տուել և այլն, և գանգատւում էք, որ ձեր այդ պատասխանը չենք հրատարակել։ Հօ չենք կարող անվերջ պատասխաններ հրատարակել։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Խմբագրութիւնս խնդրում է նրանց, որոնց վրայ անցեալից ապառիկներ են մնում, յիշել իրենց պարտքը եւ ուղարկել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿ. ԹԱՏՐՈՆՈՒՄ
Ուրբաթ, ապրիլի 6-ին
ԴԵՐԱՍԱՆ ԳԱԼՖԱՅԵԱՆԸ
Բարեհաճ մասնակցութեամբ օր. Խիթարեանի, տիկնայք Զարէլի և Նազելիի, պ. պ. Մանդինեանի, Նիկ. Աբրահամեանի, Մուրադբէգեանի, Գնունիի, Միրզայեանի, Ամօյի, Արէշեանի, Թերզիբաշեանի, Տէր-Ղազարեանի, Յովհաննիսեանի, Բաքուրեանի, Բեկնեանի և այլոց
Կըներկայացնէ
„ՀԱՄԼԵՏ"
Ողբերգ. 5 գործ. և 10 պատկ., հեղ. Շէքսպիրի
Տոմսակները վաճառւում են թատրոնի կասսայում ապրիլի 2-ից, առաւօտեան 10 ժամին։ Սկիզբն է ուղիղ 8 ժամին
(586) երեկոյեան 1—1

ԵՂԻՆԱՓԷՑՏԻ ԷՍՍԵՆՑԻԱ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ
ՏԵԽՆ Ռ-քիմիական լաբորատորիայի
Սենեակի օդն առողջացնող և հականեխող միջոց, տարածում է եղևնու անտառի հաճելի բալզամական հոտ։ Պահանջեցէք, որ իւրաքանչիւր սրուակի վրայ լինի գեղագործ Ռաֆայէլ Ըլիաշևի սեպհական ձեռքով գրած ստորագրութիւնը կարմիր թանաքով։
ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ՝
С.-Петербургъ, Коломенская, д. №12
Վաճառւում է ամեն տեղ։
(М.)№52500 18—15



МЫЛО БѢЛАЯ СИРЕНЬ
МЫЛО ВІОЛА ВІОЛЕТТА
МЫЛО РОЗА РОЗИТА
№4711
МЫЛО ОРИВІОЛА
МЫЛО „LA BARONESSE"
МЫЛО „LILY OF THE VALLEY"
ПРІОБРѢЛИ БЛАГОДАРЯ СВОЕМУ ВЫДАЮЩЕМУСЯ КАЧЕСТВУ И ЧУДНОМУ ЗАПАХУ БОЛЬШУЮ ПОПУЛЯРНОСТЬ СРЕДИ ПУБЛИКИ.

! ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ !
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՈՍԿԵԲՈՐԱԿԻ ԾՈԹՐԻՆԻ
ՕՃԱՌ
ԴԵՂԱԳՈՐԾ
Գ. Ֆ. ԻՒՐԳԵՆՍԻ
Ոչնչացնում է մուխեր, որից պլուածքը, դեղին բծերը, խալերը, բշտիկները և ազդում է տեկլորդ մաքրելու դէմ։ Առաջարկւում է որպէս արդուզարդի անուշահոտ բարձր որակութեան օճառ։
Մի կտորի գինը 50 կ., ½ կտորին 30կ.։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։
Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկուայում։
(М.) № 192764 24—7

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով ծանուցանում է ընկերութեան անդամներին, որ ժամագիր վճարումները մտցնելու համար կանոնադրութեան § 71-ի զօրութեամբ տրուող եռամսեայ արտօնութեան ժամանակամիջոցը լրանում է սոյն տարուայ ապրիլի 1-ին և եթէ մինչև սոյն տարուայ ապրիլի 8-ը չվճարուեն բոլոր ապառիկները, անկանոն վճարողների կալուածքները, կանոնադրութեան § 72-ի հիման վրայ, հրապարակական աճրդի կըհանուեն։
Ընդսմին ընկերութեան վարչութիւնը կանխաւ ծանուցանում է պ. պ. անդամ-փոխառուներին, որ սոյն կիսամեակում աճուրդները կըսկսուեն ոչ ուշ յունիս ամսուայ 18-ից։
(585) 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Վարչութիւնը խնդրում է մեծապատիւ անդամներին, կիրակի, ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 11-ին, շնորհ բերել ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովին, որ տեղի է ունենալու ընկերութեան կար ու ձևի արհեստանոցում, Գանովսկայա, №25.
Նոյն արհեստանոցում ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 10 ից տեղի կունենայ արհեստանոց յաճախող խեղճ օրիորդների ձեռագործների վաճառումը։
(587) 2—1

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՅԻ
(INJECTION AU MATICO)

Գրիմո և ընկ. դեղագործների թոյլ է տրուած Ռուսիայում։
Այս հեղուկի մէջ շահագործուած են պերուանեան Մատիկո բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյից (սերմնաթափութիւն) և մի քանի տարուայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմաթափութիւնները։
Փարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
)М)№200 245 24—7

Կոսմետիքոյին **„ԼԱՆՈԼԻՆ"**
«ՊԱՐՖԻՒՄԵՐԻՑԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ Ի. ԳՈԼԼԵՆԴԵՐ»
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
Պետերբուրգում, Разъѣзжая ул., № 13
Արդուզարդի չէզոք սապոն բարձր որակութեան՝ գինը 30 կ.։
Ստանալ կարելի է բոլոր դեղատներում և կազմեա. խանութներում։
Թիֆլիսում և Բագւում Դեղատնային ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ
(М) № 9514 5—3

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
ՀՆԱՐՈՂՆԵՐ
„ԳԼԻՑԵՐԻՆԻ ՊՈՒԴՐԻ"
Զովացնում եւ փափկութիւն ու քնքշութիւն է տալիս կաշուն
10—9
(М.)№104115

Доз. цензурою Тифлисъ, Марта 30-го дня 1901 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ 387